



**ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահ**  
**Ցուցահանդես՝ ԱՆԿԱՊԻՏԱԼ**  
**Օրեր՝ 17-27 ապրիլ, 2015**  
**Վայր՝ ԱրմԱս ցուցասրահ,  
Աբովյան 2/5**

**ՀԱՅՓ միջոցառումների շաբաթ**

ապրիլ 17, ուրբ.	Ժ. 20:00	բացման երեկո Հայփում
ապրիլ 19, կիր.	Ժ. 18:30	նորարարության շուրջ գրույցներ Հայփում
ապրիլ 20, երկ.	Ժ. 19:30	Ֆիլմի դիտում Հայփում
ապրիլ 21, երեք.	Ժ. 17:00-21:00	Խմիչք և նկարչություն Դալան պատկերասրահում
ապրիլ 23, հինգ.	Ժ. 17:00	Ցեղասպանության հիշատակում Հայփում
ապրիլ 25, շբթ.	Ժ. 16:00-20:00	Կենդանի որմնանկարչություն (գաղտնի վայր)
ապրիլ 26, կիր.	Ժ. 20:00	24-ժամյա թատերական ներկայացում Հայփում
ապրիլ 27, երկ.	Ժ. 18:30	փակման երեկո և օդային պարեր Հայփում

Ի՞նչ կասեք... ժամանակակից արվեստը հեզնական, հակասական և անզամ անհարկի՞ է թվում ձեզ: Համեցե՛ք և գտեք այս հարցի պատասխանը Հայաստանում առաջին փոփ-ափ շաբաթան՝ Հայփ փոփ-ափ (շրջիկ) պատկերասրահի հետ, մեր <<ԱՆԿԱՊԻՏԱԼ>> ցուցահանդեսի և միջոցառումների շաբաթվա շրջանակներում: Հայփն աջակցում է տեղացի ժամանակակից արվեստագետներին՝ նրանց ընձեռելով ներկայանալու նոր և անսովոր հնարավորություններ: Մեր միջոցառումների շաբաթը, հայաստանյան ներկայիս նորարարական և ստեղծագործ մոտեցմամբ, իրար կկապի մեր արվեստագետների ժամանակակից աշխատանքների մասեր:

Ի՞նչ է ՀԱՅՓ Փոփ-ափ (շրջիկ) պատկերասրահը

Փոփ-ափ պատկերասրահը շարժական պատկերասրահ է, որն անսպասելի վայրերում՝ խանութների ազատ ցուցափեղկերին, վարձույթով տրվող կառույցներում կամ լքված գործարաններում հիմնում է ժամանակավոր ցուցահանդեսներ (10 օր տևողությամբ): ՀԱՅՓ փոփ-ափ պատկերասրահի նպատակն է հասարակությանը ցույց տալ այս տարածքների հնարավորությունները և արվեստի կարևորությունը, որը մեզ օգնում է տեսնել և վերափոխաստավորել մեր շրջակայքը՝ ավելի լավ ապագայի տեսլական ունենալու համար:

Ո՞վ է ՀԱՅՓ-ը

ՀԱՅՓ-ը միջազգային, նախաձեռնող, ակտիվ երիտասարդների խումբ է, որը որակյալ և բովանդակային ցուցահանդեսներ կազմակերպելու նպատակով համագործակցում է տեղացի և միջազգային արվեստագետների և ստեղծարար կազմակերպությունների հետ: ՀԱՅՓ-ը թարմ և համարձակ պատկերասրահ է, որը անցնում է ավանդական ցուցահանդեսի սահմանները: Մեր մոտեցումը ներառում է արվեստի մասնիկներ և միջոցառումներ մեր պատերից դուրս. քաղաքն է մեր պատկերասրահը: Մեր առաքելությունը տեղացի և միջազգային համայնքներին ժամանակակից արվեստագետների հետ նոր և հետաքրքիր ձևով համախմբելն է: Ներկայացված աշխատանքները և կազմակերպված միջոցառումները նպատակ են հետապնդում քաջալերել տարբեր մոտեցումների բովանդակային փոխանակումը և փոխգործակցությունը:

<<Մենք հույս ունենք արվեստագետներին առաջարկել իրենց աշխատանքները ցուցադրելու անսովոր և ակտիվ այլընտրանք: <<Փոփ-ափ>>-ը հետաքրքիր գոյքալ միտում է և ժամանակն է, որ այն բերենք Հայաստան>>:

Աննա Կ. Գարգարյան, *հիմնադիր, տնօրեն և գեղարվեստական ղեկավար*

Ցուցահանդես: Անկապիտալ, ապրիլ 17-27, 2015

Մեր ցուցահանդեսը կբացվի ԱրմԱս-ի ցուցասրահում՝ Աբովյան 2/5 հասցեում, ապրիլի 17-ից մինչև ապրիլի 27-ը: Անկապիտալ թեման արթնացնում է քաղաքի կյանքի հոգեհարազատ և տարօրինակ զգացումներ: Չնայած քաղաքները համայնքի և զարգացման կենտրոններ են, դրանք կարող են նաև լինել անջատված զարգացման վայրեր, որտեղ հասարակության մեջ աններդաշնակություն կա: Որպես շրջիկ պատկերասրահ ՀԱՅՓ-ը ծաղկում է անջատման այս պահերին, քանի որ արանք հենց ամենահետաքրքիր պահերն են ստեղծագործական արդյունքների համար, լինի դա արվեստի գործ, թատերական ներկայացում, թե իմաստային գրույց: Պատկերասրահը իր մեջ ներառում է հավաքական ցուցահանդես քաղաքային զգացումով և հատուկ ուշադրություն դարձնելով գրաֆիկական արվեստի, փողոցային արվեստի, իլյուստրացիայի, վիդեոյի, լուսանկարչության և գեղանկարչության վրա:

## Կոնտակտային տվյալներ

Լիլիթ Մարկոսյան, ՀԱՅՓ հայկական մամուլ  
[Lilit.markosian@gmail.com](mailto:Lilit.markosian@gmail.com) | +374(0)99.470.608  
Ռաբել Ներսեսյան, միջոցառման համակարգող  
[rachel.nersesian@gmail.com](mailto:rachel.nersesian@gmail.com) | +374(0)98.044.266



ԱՆԿԱՊԻՏԱԼ  
Ժամանակակից հավաքական ցուցահանդես

Մամլո հաղորդագրություն 13 ապրիլ, 2015

Արվեստագետներ: Ադրինե Գրիգորյան, Արտակ Գևորգյան, Այա Յադրյան, Աուդիովիզուալ շրջան, Ֆլորենսիա Բաբոյան, Լյուսի Կիրակոսյան, Մարսելա Պերես, Նաիրի Խաչատրյան, Նեվերեյ, Նուսրա Կարբոն, Ռիզել, Ռուբեն Մալայան, Մամվել Մադաթեյան, Մերժ Նավասարդյան և Շամիրամ Խաչատրյան:

Բացման երեկո: Միացե՛ք մեզ ուրբաթ, ապրիլի 17-ին, ժամը 20:00-ին բացման երեկոյին: Գինի կմատուցվի Գոլդեն Գրեյվի ԱրմԱս գինու գործարանի կողմից, սնունդը՝ Քրամս հացի գործարանի կողմից, իսկ կենդանի երաժշտությունը՝ կսկսվի 20:30-ին, կնվագեն դիջեյ Հեվի Շեֆարդը, Դեվոն Յագյան-Բուտելը և Շանթ Քեբաբյանը:

Հովանավորներ: Գոլդեն Գրեյվի ԱրմԱս-ը, THE SCreENERY, Լույս հիմնադրամը, Այբ դպրոցը, Քրամսը և Մերգերյան գորգերը:

### Մամուլի կապ:

Լիլիթ Մարկոսյան, ՀԱՅՓ մամուլ  
[Lilit.markosian@gmail.com](mailto:Lilit.markosian@gmail.com)  
+374(0)99.470.608

Ռեյչլ Ներսեսյան, միջոցառման համակարգող  
[rachel.nersesian@gmail.com](mailto:rachel.nersesian@gmail.com) | +374(0)98.044.266

### ՀԱՅՓ կապ:

Աննա Կ. Գարգարյան, հիմնադիր, *կառավարիչ և գեղարվեստական ղեկավար*  
[Info.hayp@gmail.com](mailto:Info.hayp@gmail.com) [www.haypopup.wordpress.com](http://www.haypopup.wordpress.com)  
+374(0)99.741.626

Ֆեյսբուք: [www.facebook.com/haypopup](http://www.facebook.com/haypopup)  
Թվիթեր: [www.twitter.com/haypopup](http://www.twitter.com/haypopup)